ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 204
05 հունիսի 2023 թվականի N - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԱԿՆԵՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԳԱԲՐԻԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետով, հիմք ընդունելով «Ակների միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհուրդների նիստերի արձանագրությունները և տնօրեն Է.Մաշուրյանի 2023 թվականի մայիսի 23-ի գրությունը՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Ակների միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը անվանակոչել ակներցի բժիշկ գիտնական, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր կենսաքիմիկոս Գաբրիել Խաչատրյանի անունով:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Ակների միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կազմակերպության կանոնադրության 1. Ընդհանուր դրույթներ գլխի 1-ին կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Ակների Գաբրիել Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է»

2) Կազմակերպության կանոնադրության 1. Ընդհանուր դրույթներ գլխի 7-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«7. Դպրոցի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Ակների Գաբրիել Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն.
2) հայերեն կրճատ՝ «Ակների Գաբրել Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ.
3) ռուսերեն լրիվ՝ «Акнерская средняя школа имени Габриеля Хачатряна» государственная некоммерческая организация
4) ռուսերեն կրճատ՝ «Акнерская средняя школа имени Габриеля Хачатряна» ГНО
5) անգլերեն լրիվ՝ «Akner secondary school after Gabriel Khachatryan» State Non Commercial Organization.
6) անգլերեն կրճատ՝ «Akner secondary school after Gabriel Khachatryan» SNCO»:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Ակների միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը կապված կազմակերպության անվանակոչման հետ:

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Ակների միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ կանոնադրության փոփոխությունը գրանցել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժնում:

05.06.2023

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 9712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ.Ղուկասյան

2023 թ. հունիսի 05

ք. Կապան